



Հայաստան անելիս  
Բնջ շատ կա անելիք...  
Ո՛ր գիտեմ, ինչու է այդպես:  
Ա. Նովհաննիսյան

# ԿԱՐՄԻՐ ԿԱԿԱԶՆԵՐԸ ՆԵՐԿԵԼ ԵՆ ԴԱՇՏԵՐԸ

Դեռ 105 տարի առաջ ընկնում էին կարմիր կակազները ու հանճարը ճշաց.  
— Ո՞վ մարդկային արդարություն թող որ թքնեմ քո ճակատին...  
Իսկ թուր թուրքը հազարավոր զինվորների տեսանելի ու անտես զենքերով որոշել է շարունակել ցեղասպանությունը... իր հանճարի կարևորագույն ձևը սպանել:

Մի ջլատված երկիր,  
Մի բազմություն անհայտ  
Քրքջում են հեռվից աղքատության վրա  
Իմ գինվորի,  
Որի ամենամեծ զենքը ոգին է  
Եվ ասես ընտրյալների փառանգ  
ազնվադեմ,  
հպարտ, աչքերի մեջ ծովեր, դեռ աղջկա  
մարմնի սեղանը չտեսած,  
Ինքը պիտի տա բոլորի պատասխանը.  
— Բնջո՛ւ սկսեցիր,  
— Բնջո՛ւ վերջացրիր,  
— Բնջո՛ւ ստորագրեցիր:

Ո՛ր հիմա, երբ չար է ավարտը, հանկարծ արթնացան աշխարհի մեծերից ԱՄՆ, Ֆրանսիա, Միևնախի խումբ:  
Մեր ոգին, մեր կրակի անձրևի տարափի տակ դիմացող հայի ոգին խփեցին թիկունքից, խփեցին դիմացից, ու փրկությունը մնաց ճշալ:

— Կա՛նց առեք:  
Մեր հայրենիքի դարպասները ներսից բացվեցին...

Աշխարհի ուժեղները չհանդուրժեցին, որ դրսի փականքը ամրացրինք, դա մեզ չներվեց:

Եկե՛ք հուսանք, որ արդարությունը մի երես ունի, և գուցե այս տերությունները, որ հեռվից տեսան կատարվածի անմաքրությունը, կաղաղակեն...

Արդարությունը մի երես ունի, Մի փորձեք նրան երեսպատել: Աշխարհին մասկան մաքրությունով նայողի աչքերը փակում են կուրացնող ակնոցով,



Նա չի խոսում: Ես շատ խոր հավատացյալ չեմ, բայց Քրիստոսին քարկոծողներին անընդհատ հիշում եմ...  
Հանկարծ մեկին քարկոծում ու պարզվի, որ նա Աստծո՛ւ Որդին է...  
Եվ լռում էմ մի պահ, չէ, Կոմիտասի նման չէ, ոչ էլ այդպես երկար... լռում եմ, որ հասկանամ, երբ մարդ ուզում է բարիք անել ու հարցնում է.  
— Ուզո՞ւմ ես...  
— Այդո՞ղ... արձագանքը:  
Բարիքի ճանապարհին քեզ ասում են — խոստացել էս...

Խոստացել եմ, բայց ես չգիտեի, որ ինձ խոստացողները անթարթ աչքերով կնայեն ցավիս, որ մեկի տեղը 4 յաթաղանակի է գալու, որ թիկունքիս խփելու է Քրիստոսը, որ բարիք բառի մի տառը փոխես կղառնա չարիք...  
... Մեկ է, բախտը մեզ հաց դառավ արյունած,  
Օհ, պատերազմ,  
ստոր մարդու հորինած,  
Քեզ անհիճեմ հողիս ճամփեն ՄՈՌԱՆԱՍ...

Չուո՛ւ նորից, Արցախ աշխարհ,  
Աստծո՛ւ փեշից ընկած նշխար:  
Մուսաննա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,  
բանաստեղծուհի

բայց մենք կջարդենք ակնոցը, մենք լավ ենք տեսնում:  
Եվ վերջում ասեմ իմ հայ ժողովրդին մեծն թունակայանի բերանով.

...Ու պիտի գա հանուր կյանքի արշավույցը վառ հպագած,  
Հազա՛ր-հազա՛ր լուսապայծառ հոգիներով ճառագած,  
Ու երկնահաս քո բարձունքին,  
Արարատի սուրբ լանջին,  
Կենսաժպիտ իր շողերը պիտի ժպտան առաջին,  
Ու պրեստեր, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,  
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,  
Իմ նր՛ք հայրենիք,  
Հգո՛ր հայրենիք...

... Մեկ է, բախտը մեզ հաց դառավ արյունած,  
Օհ, պատերազմ,  
ստոր մարդու հորինած,  
Քեզ անհիճեմ հողիս ճամփեն ՄՈՌԱՆԱՍ...  
Չուո՛ւ նորից, Արցախ աշխարհ,  
Աստծո՛ւ փեշից ընկած նշխար:  
Մուսաննա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,  
բանաստեղծուհի



Չուո՛ւ նորից, Արցախ աշխարհ,  
Աստծո՛ւ փեշից ընկած նշխար:

Մուսաննա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,  
բանաստեղծուհի

## «ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ» ԴՐԱՍԱՀԱՎԱՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստան» համահայկական հիմնադրամի «Մենք ենք մեր սահմանները» դրամահավաքը նախաձեռնվել է միասնական որոշմամբ ս.թ. սեպտեմբերի 27-ին, պատերազմի առաջին իսկ ժամերից: Դրամահավաքին մասնակցելու կոչով հանդես եկան Հայաստանի Հանրապետության նախագահ, Ա. Սարգսյանը, հոգաբարձուների խորհրդի անդամները, այդ թվում՝ նաև Արցախի նախագահը, Ամենայն Հայոց կաթողիկոսը, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը և այլք: Համագային դրամահավաքի մեջ ներգրավվեցին հարյուր հազարավոր հայրենակիցներ թե՛ Սփյուռքում և թե՛ Հայաստանում: Անգնահատելի է նաև Սփյուռքի դրամահավաքի գործընթացներում ընդգրկված բոլոր կառույցների, կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների դերը: Հիմնադրամը և իր միջազգային ցանցը, առաջին իսկ օրվանից ուղիղ աշխատելով Արցախի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետությունում Արցախի ներկայացուցչության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և այլ գերատեսչությունների հետ, շարունակական մեծածավալ օգնություն է ցուցաբերել Արցախին: Խոսքը դիվելյային գեներատորների, շտապ օգնության մեքենաների, բժշկական սարքավորումների ու առաջին օգնության պարագաների, կենցաղային առաջին անհրաժեշտություն իրերի, փայտի վառարանների, հոսանքի տաքացուցիչների, շարժական գազօջախների, շարժական լիցքավորման կայանների, մանհակայների և այլ տարատեսակի հսկայական օգնության մասին է, որն անհանդուր ամբողջով է եղել պատերազմի ընթացքում հումանիտար ճգնաժամը մեղմելու: Միևնույն ժամանակ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի ցանցի միջոցով բեռների տեսքով հայրենիք է հասցվել ավելի քան հարյուր տոննա հումանիտար օգնություն: Ելնելով ս.թ. սեպտեմբերի 27-ից հետո ստեղծված իրավիճակից, անհրաժեշտություն առաջացավ առավելագույնս համահամբեղ Հայաստանի Հանրապետությունում ձևավորված ռեսուրսները հասցվող վնասների արագ վերականգնման և խիստ անհրաժեշտ հրատապ գնումների կենտրոնացված կատարման նպատակով (այդ թվում՝ բազմաթիվ ենթակառուցվածքներին ու առողջապահական համակարգերին պատճառվող վնասներ, սոցիալական տարաբնույթ խնդիրներ կապված Արցախից տեղահանվածների հետ, ինչպես նաև անագնացող համավարակ և այլն): Ելնելով աշխատանքները հնարավորինս արագ կազմակերպելու տեսանկյունից կարևոր էր ոչ միայն ֆինանսական, այլ նաև մարդկային ռեսուրսների համալսմամբ:

Այս շրջանակներում, «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում կայացրեց «Մենք ենք, մեր սահմանները» դրամահավաքի շրջանակներում որոշակի օժանդակություն տալ Հայաստանի Հանրապետության բյուջեին նույնանպատակ ծախսերի (սոցիալական, առողջապահական, ենթակառուցվածքներ և այլն) իրականացման գործընթացը մեկտեղելու նպատակով: Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կայացրել է համապատասխան որոշումներ, որոնց հիման վրա հիմնադրամի կողմից սրամարդված օժանդակությունն ունի համապատասխան հիմնավորված փաստաթղթավորումը: Գումարներն ուղղվել են Արցախից տեղահանված տասնյակ հազարավոր հայրենակիցների խնդիրներին, ինչպես նաև առողջապահական, սոցիալական, ենթակառուցվածքների և այլ կարևոր ոլորտների ֆինանսավորմանը: Համաձայն «Հայաստան» համահայկական հիմնադրամի կանոնադրության հիմնադրամի գործադիր վարչությունը մանրամասն հաշվետվություն է պատրաստում իր գործունեության և ծախսերի վերաբերյալ, որը կվերանայվի հիմնադրամի վերստուգիչ հանձնաժողովի կողմից և կներկայացվի Հոգաբարձուների խորհրդի հաստատմանը: Հավատարիմ մնալով մեր կարգախոսին նվիրատուների միջոցները ծախսել խնայողաբար, արդյունավետ և նպատակային, մնացյալ գումարները ևս կուղղվեն Արցախից տեղահանվածների, զոհվածների ու վիրավորների ընտանիքներին, ինչպես նաև Արցախ վերադարձող ընտանիքների բազմապիսի կարիքների բավարարմանը (կոմունալ ծախսեր, վերակառուցման աշխատանքներ, կորսված գույքի մասնակի հատուցումներ, նպաստներ և այլն), ինչն այս պահին կարևորագույն առաջնահերթություն է: Այս ուղղությամբ արդեն իսկ մշակվում են մանրամասն ծրագրեր: Հիմնադրամը, լինելով ապաքաղաքական բարեսիրական կառույց, որը հետապնդում է բարեգործական, սոցիալական, տնտեսական, գիտական, կրթական, մշակութային, առողջապահական և այլ հանրօգուտ նպատակներ, շարունակելու է գործել համաձայն իր առաքելության ու կանոնադրական նպատակների ի շահ Հայաստանի, Արցախի և Սփյուռքի: Կարիքները հսկայական են, գործն անասելի շատ, ուստի համազգային մոբիլիզացիան է՝ ավելի անհրաժեշտ է: Եվ մեկ անգամ խորին շնորհակալություն ենք հայտնում մեր հարյուր հազարավոր նվիրատուներին, բոլոր աջակիցներին, ովքեր կանգնեցին և շարունակում են կանգնել Հայրենիքի և արցախցու կողքին:

«Հայաստան»  
համահայկական հիմնադրամ

### ԱՅՐՈՒԲԵՆՍ ԱՎԵՐՎԱԾ

Կրակում են այբուբենիս տառերին,  
Եվ ընկնում են տառեր ձայնեղ ու անձայն  
Խլանում է բառը ծառին ու ծաղկին,  
Անոթահար, ողբաձայն...  
Երկի՛ր, տար ինձ այն անունից ոչ անուն,  
Ո՞վ սվինը խրեց բառիս արյունոտ:  
Ա՛խ, իմ տառեր՝ որդիներս, Այբուբենս ավերեցին տակնուվեր...  
Որտե՛ն դ փնտրեմ հողի վրա, հողի տակ,  
Մոր սրտի մեջ, թե՛ սիրածի կրծքում փակ:  
Վաղ ծերացան հեզ հայրերի վարսերում,  
Ճերմակների ու ցավերի դարսերում,  
Թե՛ այս փոքրիկ նոր ծնվածի բարություն,  
Ուրկից սուրբ մոր կրծքից կաթիլն էր բուրում...